ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Վեբ կայք՝ www.minfin.am, ֆիննախ.հայ
Էլ. փոստ՝ secretariat@minfin.am
Հեռ.՝ (+374 11) 800 156

N _____

<<_____>> _____20 թ.

Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

«Քրեական գործերով իրեղեն ապացույց հանդիսացող թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց բաղադրիչների, հրազենի, դրա հիմնական մասերի, ռազմամթերքի, պայթուցիկ նյութերի և պայթուցիկ սարքերի փոխանցման կարգի մասին» արձանագրության՝ Հայաստանի Հանրապետության համար ֆինանսական պարտավորություններ նախատեսող դրույթների առկայության մասին

«Քրեական գործերով իրեղեն ապացույց հանդիսացող թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց բաղադրիչների, հրազենի, դրա հիմնական մասերի, ռազմամթերքի, պայթուցիկ նյութերի և պայթուցիկ սարքերի փոխանցման կարգի մասին» արձանագրության (այսուհետ՝ Արձանագրություն) 4-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ Կողմերն իրենց իրավասու մարմինների միջոցով կատարվող հարցումով պարտավորվում են միմյանց փոխանցել իրեղեն ապացույցներ՝ հարցում ուղարկող Կողմի քրեական դատավարության ընթացքում օգտագործելու համար:

Արձանագրության 9-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր Կողմ հարցումն իրականացնելու ընթացքում ապահովում է փոխանցվող տեղեկույթի գաղտնիությունը և իրեղեն ապացույցների անվտանգության պաշտպանությունը:

Արձանագրության 10-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ իրեղեն ապացույցների փոխանցումը կատարվում է Կողմերի իրավասու մարմինների կողմից՝ Արձանագրությանը կից 1-ին հավելվածով սահմանված կարգով: Նշված հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ փոխանցման ժամանակ իրեղեն ապացույցները պետք է փաթեթավորել՝ ապահովելով դրանց անվնաս և անվտանգ տեղափոխումը՝ հարցում ստացող Կողմի ազգային օրենսդրության համաձայն:

Արձանագրության 13-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ Արձանագրության կատարման ընթացքում Կողմերը ծախսերը կատարում են ինքնուրույն, եթե յուրաքանչյուր կոնկրետ դեպքի համար այլ կարգ չի համաձայնեցվում:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում ենք, որ Արձանագրությամբ սահմանված ԱՊՀ շրջանակներում քրեական գործերով իրեղեն ապացույց հանդիսացող թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց բաղադրիչների, հրազենի, դրա հիմնական մասերի, ռազմամթերքի, պայթուցիկ նյութերի և պայթուցիկ սարքերի փոխանցումը ենթադրում է Հայաստանի Հանրապետության համար ֆինանսական պարտավորությունների առաջացում, հետևաբար նաև պետական բյուջեի ծախսերի ավելացում:

Միաժամանակ Արձանագրությունում եկամուտների նվազեցում նախատեսող դրույթներ առկա չեն:

ԱՐՄԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ